

# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

---

DOI: <https://doi.org/10.59630/25792644-2023.2.25-71>

## ԷԿՈՆՈՄԻԿԱՐԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ, ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Բանալի բառեր** – պատասխանատվությամբ սպառում, ծառայություններ էկոհամակարգերից, կայուն զարգացում, ֆինանսական հաշվառման ստանդարտներ, IFRS-S1.

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կայուն զարգացման հիմնախնդիրներն են ձևավորվեցին անցյալ դարի 70-ական թվականների, երբ շահույթի ստացման մրցավազքում գործարար համայնքի համար հասկանալի դարձավ, որ ընդերքի անխնա շահագործումը, շրջակա միջավայրի աղտոտումը աղետալի վնասներ կբերի Երկիր մոլորակին, որոնք այլևս հնարավոր չի լինի փոխհատեցել, կամ վերականգնել նույնիսկ գործարարության արդյունքում ստացված գերշահույթներով: Ակնհայտ դարձավ, որ մարդկանց սոցիալ-տնտեսական մակարդակի դրական աճին նպաստող գործարարությունը մինևս ժամանակ պարունակում է բնապահպանական և սոցիալական բացասական ռիսկեր, որոնց անկառավարելիությունը հանգեցնում է անդառնալի վնասների և ապագա անկայունությանը: Իսկ անկայունությունը կարող է ձևավորվել բնական ռեսուրսների անխնա շահագործման, դրանց բացակայության պատճառով, բնապահպանական հաշվեկշիռների խախտումներով, գործարարության սոցիումի անկատարության հետևանքով, ապագային միտված մարդկային կապիտալի փոշիացումով՝ այսինքն, կա-

յուն գործարարության համար ապահովման անհրաժեշտ բաղադրիչների կազմաքանդումով:<sup>1</sup>

### ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կայուն զարգացման հայեցակարգը իր ձևավորման սկզբնափուլում ներկայացվեց որպես «բնական ռեսուրսների ներկա պահի շահագործում այնպես, որ հնարավորություն ստեղծվի ապագա սերունդներին նույպես օգտվելու այդ ռեսուրսներից»: Այսինքն, սկզբնապես կայուն զարգացումը կառուցվում էր սերունդների համերաշխության սկզբունքի հիման վրա, երբ մարդկությունը բավարարելով բնօգտագործման իր ընթացիկ պահանջմունքները, հնարավորություն էր տալիս գալիք սերունդներին նույնպես բավարարելու բնական ռեսուրսներից օգտվելու սեփական պահանջմունքները:

Նման պարագայում կիրառվում են ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ, հումքահանքային փոխարինիչներ, բնօգտագործման արդյունավետ մոտեցումներ: Ի սկզբանե, այդ գաղափարների իրագործման ոգեշնչման աղբյուր հանդիսացավ անտառափայտի օգտագործման գործընթացը, երբ մարդիկ քաջ գիտակցեցին, որ անտառահատումների վնասները պետք է վերականգնել նոր ծառատունկերով, որոնք հաջորդ սերունդների համար փայտանյութի ռեսուրս են կհանդիսանան:

Առավել պարզ մեկնաբանմամբ, կայուն զարգացման ապահովման դեպքում Երկիր մոլորակը գործարարները ձգտում են փոխանցել ապագա սերունդներին բնօգտագործման այն հնարավորություններով, որոնք որ ժամանակին իրենք ստացել են նախնիներից: Բնականաբար, այս դեպքում կայունությունը առավելապես առնչվում է բնական ռեսուրսների պաշարների «կայուն մակարդակի» ապահովմանը: Սակայն տարիներ անց, գործարարության կայուն զարգացումը գործնականում միջազգայնորեն դիտարկվեց առավել լայն շրջանակով, որն արդյունավետ բնօգտագործումից բացի, ընդգրկեց նաև աղքատության նվազման, կրթություն

---

<sup>1</sup> **Hakobyan A., Tshughuryan A., Martirosyan G.,** (2023) “The Integrated Reporting Philosophy in Business Strategy” //“Wisdom” Scientific journal, Yerevan, 2023, 1(25), pp. 169-176. DOI: 10.24234/wisdom.v25i1.978.

ստանալու հասանելիության, «կանաչ էներգիայի» օգտագործման, կլիմայի առողջացման պահանջներ:

Առավել ընդգրկուն համատեքստով «կայուն զարգացումը» ներկայացվեց 1987 թվականին Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային կոնֆերանսում, երբ Ջ. Բրուտլանդը “Մեր ընդհանուր ապագան” զեկույցում ներկայացրեց բնօգտագործման ոլորտում սերունդների համերաշխության մոտեցումները: Այնուհետև, ՄԱԿ-ի հովանու ներքո 1992 թվականին Ռիո դե Ժանեյրոյում կայացած գազաթաժողովում ընդունվեց «21-րդ դարի օրակարգը» փաստաթուղթը, որտեղ հստակ ներկայացվեցին հասարակության կայուն զարգացման ուղղությունները: Նման հարցադրումները այնքան սրվեցին, որ արդեն քսան տարի անց, 2002 թվականին Յոհանսեսբուրգի վեհաժողովում, որը հետագայում վերանվանվեց «Ռիո 10+», մշակվեց կայուն զարգացման գործընկերության հայեցակարգ: Իսկ հաջորդ տասնամյակում, «Ռիո 20+» վեհաժողովում կայուն զարգացման հայեցակարգում թիրախավորվեց նաև «կանաչ տնտեսությունը», երբ օգտագործվելու են այլընտրանքային էներգառեսուրսներ, նվազագույնի են հասցվելու ջերմոցային գազերի արտանետումները, արդյունավատ են գործելու էկոհամակարգային ծառայությունները: Ի վերջո, 2015 թվականին ՄԱԿ-ի կողմից մշակվեցին կայուն զարգացման 17 նպատակներ, թիրախավորված աղքատության վերացմանը, առողջապահությանը, բարեկեցությանը, որակյալ կրթությանը, զենդերային հավասարությանը, պատասխանատվությամբ սպառմանն ու արտադրությանը, կլիմայի փոփոխությանը, որոնք ընդունվեցին 193 երկրների կողմից:<sup>1</sup>

Դրա հետ կապված, ներկայումս խնդիր է դրվում արդյունավետ կառավարելու էկոհամակարգային ծառայությունները: Կազմակերպությունները էկոհամակարգային ծառայություններ են ստանում և սպառելով բնության արգասիքները, իսլամիս փոխհատուցման ուղիներ են որոնում: Եթե դրանք սազմանափակվում են բացառապես բնապահպանական հարկերով և բնօգտագործման վճարներով, ապա նման էկոհամակարգային ծառայությունների դիմաց նման փոխհատուցումները չեն կա-

---

<sup>1</sup> Sustainable Development Goals, Unated Nation, 2015.


րող բավարար համարվել, քանի որ թիրախավորված չեն բնական պաշարների կայունության ապահովմանը և միայն բնական պաշարների կանխարգելիչ գործառույթներ են կատարում: Բիզնես գործունեությունում օգտագործվում են այնպիսի ռեսուրսներ, որոնք կազմակերպության բուն գործունեության արգասիքը չեն, ուստի և իրենց սպառումից հետո վերականգման կարիք ունեն հենց գործարարների կողմից: Եվ եթե տեղի չի ունենում սպառված ռեսուրսների վերականգնում ձեռնարկատիրական գործունեությունում, ապա էկոհամակարգերի կողմից գործարարությանը մատուցվող ծառայությունների կայուն ընթացքը տեսանելի ապագայում արդեն կասկածի տակ է դրվում: Այսպես, եթե ձկնարդյունաբերությունը զարգանում է ձկների որսի ընդլայնման հաշվին, ապա դրան զուգահեռ, այն պետք է միջոցներ ձեռնարկի ձկների սպառված պաշարների վերականգման ուղղությամբ: Հակառակ դեպքում, գալիք սերունդներին հասանելի չեն լինի նմանատիպ պաշարներ, ու դրանով իսկ կխաթարվի ձկնարդյունաբերությունը և կասկածի տակ կդրվի սննդի վերամշակման այդ ոլորտի կայունությունը: Նույնը վերաբերում է նաև կահույքագործությանը, որտեղ օգտագործվում են անտառային ռեսուրսներ, որոնք սպառվելով, արդյունաբերության առջև պահանջ են դնում վերականգնելու անտառը, իրականացնելու ծառատունկ, դրանով իսկ գալիք սերունդներին փոխանցելով անհրաժեշտ փայտանյութ՝ կահույքագործության կայունությունն ապահովելու համար:

Հետևաբար, ներկայումս գործարարությանը տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների պատասխանատվությամբ սպառման խնդիր է դրվում, որը և որոշակիորեն պահանջում է էկոհամակարգային ծառայությունների սպառման ֆինանսական կառավարում գործարարության կայուն զարգացման համատեքստում:

Գործարարության կայուն ընթացքը պահանջում առաջին հերթին անհրաժեշտ ֆինանսաարտադրական ռեսուրսների առկայություն (տե՛ս գծապատկեր 1.): Տեսանելի ապագայում տնտեսական գործունեությունը չի կարող ապահովել էկոհամակարգային ծառայությունների սպառման կայունություն, եթե կազմակերպությունը ապահովված չլինի անհրաժեշտ արտադրական ակտիվներով և ֆինանսական ռեսուրսներով:

Հատկապես, գործարարության ֆինանսական կայունության աստիճանի անկումներն են առաջին հերթին հանգեցնում էկոհամակարգային ծառայությունների կայունության խաթարման ռիսկերի:

Էկոհամակարգային ծառայությունների կայունության զարգացմանը նպաստում է նաև գործարար միջավայրում ձևավորվող սոցիալական կապիտալի աճը: Ունենալով բազում գործընկերներ, ձեռնարկատերերը փորձում են փոխվստահելի և փոխհամաձայնեցված միջավայրում գործել: Այս դեպքում, կրեդիտորները դժկամորեն չեն տրամադրում ֆինանսական ռեսուրսներ, ներդրողները վստահում են գործարարության հաջող ընթացքին և ապագա տեսլականին, գնորդներին ցուցաբերվում է փոխվստահելի վերաբերմունք և դեբիտորական պահանջների մեղմացում, կազմակերպության աշխատակիցներին ներկայացվում են աշխատանքի խրախուսման մոտիվացիոն լծակներ, որի արդյունքում ձևավորվում է կազմակերպության գործունեության նկատմամբ հավատարմություն:



**Չճապատկեր 1.** Գործարարության կայուն զարգացման ռեսուրսները<sup>1</sup>

<sup>1</sup> **Asatryan K.**, Management of sustainable business development, //monograph, Yerevan, 2023, page 56.

Այսինքն, բիզնես միջավայրը վերածվում է մի սոցիումի, որտեղ փոխվստահության և փոխշահավետության հիմքերով ձևավորվում է սոցիալական կապիտալ, որն էլ իր հերթին լուրջ խթան է հանդիսանում կայուն էկոհամակարգային ծառայությունների հետագա զարգացման համար: Իսկ եթե, կազմակերպությունները ուշադրություն չեն դարձնում բիզնես միջավայրում ձևավորվող սոցիալական կապիտալին, և անգամ իրենց գործունեությամբ նպաստում են վերջինիս փոշիացմանը, ապա դրանով իսկ ռիսկեր են ձևավորում էկոհամակարգային ծառայությունների կայուն զարգացման ընթացքի խաթարման համար:

Գործարարությանը մատուցվող էկոհամակարգային ծառայությունների կայուն զարգացմանը նպաստում է նաև արդյունավետ կառավարման համակարգի ներդրումը: Այսօր արդեն լուրջ ուշադրություն է դարձվում ոչ միայն «վերենից-ներքև», այլև «ներքևից-վերև» կառավարման մոտեցումներին, երբ կառավարվող խմբերը իրենք էլ մասնակցում բիզնես որոշումներին, ընդգրկվելով մասնակցային կառավարման համակարգում: Այս պարագայում, կառավարչական որոշումները կայացվում են տեղում, ձևակերպվում առավել իրատեսական և բխում են ձևավորվող իրավիճակներից: Հետևաբար, կառավարումը դառնում է հասցեական և իր վերջնարդյունքներով թափանցիկ, որն էլ շահախնդրություն է առաջացնում որոշումներ կայացնողների շրջանակում՝ բիզնեսի հետագա զարգացումն ապահովելու նպատակով: Դրանով իսկ, բիզնեսի կայուն զարգացումը գործարարության ընթացքի ապահովման ավանդական ռեսուրսներից բացի, պահանջում է նաև լրացուցիչ ռեսուրսներ՝ բնապահպանական, սոցիալական, մարկային կապիտալի տեսքով, որոնք կառավարելի է դառնում նպատակային օգտագործման և տնտեսական գործունեության անընդհատության ապահովման տեսանկյունից:

Կայուն զարգացման նպատակադրումներից ելնելով, կարելի է արդեն իսկ ենթադրել դրանց հասանելիությամբ հետաքրքրված շահառուների լայն շրջանակի մասին, որի սահմանները կարող են ժամանակի ընթացքում ընդլայնվել, ներառելով ժամանակի պահանջներից բխող նոր խաղացողների (տե՛ս գծապատկեր 2):

Այսպես, երկրների կառավարությունները իրենց գերատեսչական մարմիններով հանրային շահեր են հետապնդում և գործարարության հանդեպ պահանջկոտություն են դրսևորում բնական ռեսուրսների ռացիոնալ շահագործման, շրջակա իջավայրի պահպանման, սոցիալական արդարարության, կրթության հասանալիության ապահովման ուղղություններով: Սակայն, կայուն զարգացմանը առնչվող հանրային սպասումները կարող են դուրս մնալ պետական գերատեսչական մարմինների տեսադաշտից և անցնել հասարակական կազմակերպություններին: Դրանք կարող են լինել գենդերային հիմնախնդիրներին, հարստության բևեռացման մեղմմանը, արժանապատիվ աշխատանքին հասանելիությանը ուղղված լուծումներ: Ավելին, հասարակական կազմակերպությունները ձեռնարկում են անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ:

Տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես գործարարության կայուն զարգացման շահառուներ են հանդիսանում, քանի որ մի կողմից ձեռնարկատիրական գործունեության ընդլայնումը նոր աշխատատեղեր է բացում, բարելավում է ազգաբնակչության սոցիալական վիճակը, սակայն մյուս կողմից, առողջապահական և բնապահպանական բնապահպանական ռիսկեր է պարունակում: Տեղական ինքնակառավարման մարմինները շահագրգիռ են վերականգնելու և խթանելու ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործումը, ապահովելու անտառների կայուն կառավարումը, պայքարելու անապատացման դեմ, կանխարգելելու և հողերի որակական վատթարացումը, կասեցնելու կենսաբազմազանության կորուստը:

Բիզնես գործըկերները նույնպես ընդգրկված կայուն զարգացման շահառուների առանցքային խմբում: Այսօր կարևորվում է գործարարության մոդելում գործող արժեքային շխթայի մասնակիցների վերաբերմունքը կայուն զարգացմանը: Կազմակերպությունները նախընտրում են այնպիսի մատակարարներ և գնորդներ, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են կայուն զարգացմանը: Բանկերը փորձում են կանխարգելել այնպիսի փոխառությունների տրամադրումներ, որոնց օգտագործումը բիզնեսի կողմից վատթարացնում է բնապահպանական միջավայրը:

Վերջին տասնամյակում աստիճանաբար ակտիվանում է պատասխանատվությամբ ներդրումների մշակույթը, երբ բաժնետերերը խուսափում են գնել արժեթղթեր այնպիսի կազմակերպություններից, որոնք չեն վարում կայուն զարգացման ռազմավարություն, չեն ստեղծում դիմակայուն ենթակառուցվածքներ, անտարբեր են ներառական ու կայուն արդյունաբերության զարգացմանը, առանձնապես մոտիվացված չեն նորարարության խթանման ասպարեզում:

Բիզնես գործընկերների համայնքում որպես կայուն զարգացման շահագրգիռ կողմ է հանդես գալիս նաև կազմակերպությունների կողմից հավաքագրված աշխատուժը, որը շահախնդիր է ոչ միայն մասնագիտական կարողությունների գծով պարբերաբար իրականացվող վերապատրաստումների, այլև գործատուի կողմից արդարացի վարձատրումների և աշխատակիցների սոցիալական պայմանների բարելավումների գծով:


Հետևաբար, ներկայումս արդիական է դառնում կայուն զարգացման շուրջ համախմբված բազմաբնույթ շահառուներին անհրաժեշտ տեղեկատվական ապահովվածությունը, որպեսզի վերջիններս կարողանան գնահատել գործարարության կայուն զարգացման ռիսկերը և դրանց վերացման հնարավորությունները, որոշումներ կայացնեն տեսանելի ապագայում կայունության շարունակականության գծով:

Թվարկած խնդիրների լուծումները էականորեն պայմանավորված են կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվողականության բարելավումների հետ, ուստի արդեն իսկ գործողության մեջ են դրվում հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ, որոնք անմիջականորեն թիրախավորվում են կայուն զարգացմանը առնչվող տեղեկատվության բացահայտումներին և գործարարության կայունությանը առնչվող շահառուներին:

Գործարարության մրցակցային գնահատումը ներկայումս չի սահմանափակվում միայն ֆինանսական արդյունքների տեսանկյունից, այլ նաև դիտարկվում է կայուն զարգացման հնարավորությունների առումով: Ձեռներեցների մասնավոր շահերի և գերշահույթների ձեռքբերումների նպատակադրումները արդեն իսկ հակադրվում են գործարարության հանրային սպասումներին, երբ խնդիր է դրվում կանխարգելելու բիզնեսի



հետևանքով ձևավորվող բնապահպանական ռիսկերը, բարձրացնելու բնօգտագործման արդյունավետությունը, նպաստելու օգտագործվող մարդկային կապիտալի որակական աճը, ստեղծելու գործընկերային սոցիալական կապիտալ:



**Գծապատկեր 2** Գործարարության կայուն զարգացման շահառուների շրջանակը<sup>1</sup>

Այս առումով խնդիր է դրվում համակարգելու էկոհամակարգային ծառայություններին առնչվող տեղեկատվությունը, որը իրականացվելու է կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվություններով: Իսկ քանի որ էկոհամակարգային ծառայությունների ներուժը բնութագրվում է ոչ ֆինանսական և ֆինանսական տեղեկատվությամբ, ապա գործնականում առաջանում են նաև բիզնեսի կայուն զարգացման տեղեկա-

<sup>1</sup> **Pluta Arbidane, Nonna Khachatryan, Narine Martirosyan**, Issues of accounting information disclosures for ecosystem services (IFRS-S1 interpretations), //Economics, Finance and Accounting scientific journal, 2(12) 2023. pp: 56-57.

տվության հաշվետվողականության ձևաչափի ներկայացման հիմնախնդիրներ, որոնք իրենց լուծումներին են սպասում:<sup>1</sup>

Ի սկզբանե գործարարությունը սկսեց ակտիվանալ նախաձեռնող անհատների կամ խմբերի կողմից, որի մոտիվացիան սեփական շահունենալն էր: Արտադրելով նյութական բարիքներ, կամ հանրությանը տրամադրելով ծառայություններ, հաջողակ գործարարները բարձրացնում էին աշխատանքի արտադրողականությունը, կիրառում ռեսուրսների օգտագործման արդյունավետ ուղիներ, և արտադրական գործոնների ռացիոնալ համակցությամբ ձևավորում հավելյալ արդյունք, որը ծառայում էր ի նպաստ սեփական շահերի: Մեր օրերում գործարարության կազմակերպման ձեռներեցների առաջնահերթ մոտիվացիան նույնպես շահույթի ստացումն է, ֆինանսական կայունության ամրապնդումը և շուկայում մցակցային դիրքերի ձեռքբերումը:

Սակայն, գործարությունը չի կարող անվերջ ծառայել սեփականատերերին և անհատական շահեր հետապնդել, քանի որ այն անմիջականորեն պարտավորություններ ունի հենց ձեռներեցական շահերից դուրս: Մասնավորապես, ձեռնարկատերը օգտագործում է բնական ռեսուրսներ, հանածոներ, հավաքագրած աշխատուժ, որն ըստ էության, իր գործունեության արգասիքը չէ և նրան տրվել է ուղղակի հնարավորություն այդ ամենից օգտվելու համար: Հետևաբար, գործարարը պարտավոր է այդ ռեսուրսներն օգտագործել այնպես, որ դրանք հասանելի լինեն գալիք սերունդներին:

Հենց այս հիմնարար մոտեցումն է ի սկզբանե ընկած էկոհամակարգային ծառայությունների կայուն զարգացման պահանջատիրության հիմքում: Գործարարության զարգացման կայունության ապահովումը առաջին հերթին պահանջում է ներկա արտադրական ռեսուրսների այնպիսի պոտենցիալի փոխանցում ապագային, որպեսզի սերունդները կարողանան շարունակել իրենց ձեռներեցությունը և չբախվեն անխնա օգտագործված և սպառված հումքահանքային և բնական պաշարների փաս-

---

<sup>1</sup> **Martirosyan G.**, Conceptual problems of implementation strategic accounting, //Economics, Finance and Accounting, Vol.1, (11), 2023, pp 76-82 DOI: <https://doi.org/10.59503/29538009-2023.1.11-76>.

տին, որն էլ իր հերթին կխափանի գործարարության կայուն ընթացքը: Չէ որ, գործարարությունը ստեղծելով հանրային բարիքներ և բավարարելով մարդկության սպառողական պահանջմունքները, որոշակիորեն վնասում է նաև շրջակա միջավայրին և հանրային տեսանկյունից ձևավորում բացասական արդյունքներ: Այս առումով, գործարարության մասնավոր շահերի «ախորժակը» կայուն զարգացման տեսանկյունից զսպվում է հանրության նկատմամբ ռեսուրսների արդյունավետ օգտագործման պատասխանատվությամբ:

Մյուս կողմից, գործարարության միջավայրի ռեսուրսները շահագործելիս և անձնային շահերին հետամուտ լինելիս ձեռներեցները տալիս են սեփական «հիմնավորումներ» այն առումով, որ բիզնես գործունեությունը ուղեկցվում է վնասների փոխհատուցման ռիսկերով և հետևաբար ռեսուրսների արդյունավետ օգտագործման պահանջների շրջանցմամբ գերշահույթների ստացումը իրենց տեսանկյունից կարող է և արդարացված համարվել: Այս դեպքում արձանագրվում է, որ շահույթ հետապնդող գործարարությունը բնութագրվում է հավանական ռիսկերով, երբ ռեսուրսներ ներգրավելով և օգտագործելով, ձեռներեցները ունենում են վնասներ ձևավորելու հավանականություն, նամանավանդ, երբ կիրառում են նորամուծական գաղափարներ, ուստի և կայուն զարգացման ռեսուրսների անարդյունավետ օգտագործման հաշվին գերշահույթների ստացումը մասնավոր հատվածի կողմից արդարացվում է յուրովի:


Սակայն, հանրության տեսանկյունից նման մոտեցումը ընդունելի չէ, քանի որ բիզնես գործունեությունը այս դեպքում դիտարկվում է հանրային շահերի տեսանկյունից: Նման պարագայում հասարակությունը հետաքրքրված է բիզնեսի կայուն զարգացմամբ և ձեռնարկատիրությունը գնահատում է ոչ միայն հանրային բարիքներ ստեղծելու, այլև հետագա գործարարությունը շարունակելու, և դրան աջակցող տնտեսական պոտեննցիալը ընդլայնելու տեսանկյունից: Հանրությունը սպասում է այնպիսի հարցադրումների պատասխանների, ինչպիսիք են. ինչպե՞ս են փոխհատուցվում գործարարության ընթացքում սպառված բնական ռեսուրսները, ինչպի՞սն է բնօգտագործման արդյունավետությունը, ինչպե՞ս են կանխվում շրջակա միջավայրին գործարարության հետևանքով թույլ

տրված վնասները, որքանով են գործարարները նպաստում օգտագործվող մարդկային կապիտալի որակական կազմի ընդլայնմանը, և վերջապես, ինչպե՞ս է ապահովվում բիզնեսի կառավարման արդյունավետությունը տեղեկատվության թափանցիկության, մասնակցային վարչարարության, սոցիալական կապիտալի ձևավորման առումով:

Հետևաբար, գործարարության կայուն զարգացումը բնութագրող հաշվապահական հաշվառման հաշվետվական տեղեկատվությունը կարող ենք պայմանականորեն ներկայացնել երկու ուղղությամբ՝ «ներքևից» և «վերենից»: Ներքևից ձևավորվող տեղեկատվությունը գուտ ֆինանսատնտեսական է, և դրանց շահառուներն են բիզնես գործընկերները, որոնք ձեռներեցության կայունությունը գնահատում են կուտակված ֆինանսատնտեսական պաշարների տեսանկյունից (տե՛ս գծապատկեր 3): Իսկ «վերնից» ձևավորվող տեղեկատվության օգտատերերը հանրային հատվածի սուբյեկտներն են (պետական գերատեսչություններ, տարածքային ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ, և այլն), որոնք գործարարության կայուն զարգացման հանրային շահեր են հետապնդում: Ընդ որում, ներկայումս հրատարակվող հաշվապահական ֆինանսական հաշվետվություններում կայուն զարգացմանը առնչվող ֆինանսատնտեսական տեղեկատվությունը գերիշխող է համարվում հանրային շահերը սպասարկող տեղեկատվության նկատմամբ (տե՛ս գծապատկեր 3): Ուստի անհրաժեշտություն է համարվում գործարարության կայուն զարգացման տեղեկատվական հոսքերի ծանրության կենտրոնի տեղափոխում՝ «ներքևից» դեպի «վերն»:

Այս գործընթացը ներկայումս ակտիվանում է ֆինանսական հաշվառման նոր սերնդի միջազգային ստանդարտների հրատարակման նախապատրաստական աշխատանքներին զուգընթաց: Այսօր արդեն շրջանառության մեջ են դրվել IFRS-S1 և IFRS-S2 ստանդարտները, որոնք ուղղորդում են, թե ինչպես պետք ներկայացվեն գործարարության կայուն զարգացման, նաև ձեռներեցության արդյունքում կլիմայի փոփոխության բացահայտումները հրապարակվող հաշվապահական հաշվետվություններում: Կայուն զարգացման միջազգային ստանդարտների խորհուրդը (ISSB) 2023 թվականին հրատարակեց «Կայունությանը առնչվող ֆինանս-

սական տեղեկատվության բացահայտման ընդհանուր պահանջներ» ՖՀՄ-S1 և «Կլիմային առնչվող» ֆինանսական հաշվետվությունների միջազգային S2-ի ստանդարտները, որոնք կազմակերպություններում կիրառվելու են ՖՀՄՍ (IFRS) ստանդարտներին զուգահեռ:




**Գծապատկեր 3.** Կայուն զարգացման հաշվապահական տեղեկատվության ապահովման հոսքերը<sup>1</sup>

Որպեսզի կայունության հետ կապված ֆինանսական տեղեկատվությունը օգտակար լինի, այն պետք է լինի համապատասխան և արժանահավատ: Կայունության հետ կապված ֆինանսական միջոցերի օգտակարությունը տեղեկատվությունը ընդլայնվում է, եթե տեղեկատվությունը համադրելի է, ստուգելի է, տեղին է և հասկանալի: Մրանք անշուշտ բարձրացնում են կայունության հետ կապված օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական հատկանիշները: Սակայն ի տարբերություն ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների, կայուն զարգացման ստանդարտները լրացուցիչ բացահայտումներ են պահանջում, կապված գործարարության կայուն զար-

<sup>1</sup> **Asatryan K.**, Management of sustainable business development, //monograph, Yerevan, 2023, page 83.

զացման կառավարման գործիքակազմի, կազմակերպության կողմից որդեգրած կայուն զարգացման ռազմավարության, այն իրագործման ռիսկերի և հնարավորությունների, ինչպես նաև գործարարության արժեքային շղթայի մասին, որտեղ ձևավորվում են կայուն զարգացման հիմքեր (տե՛ս գծապատկեր 4)



**Գծապատկեր 4.** Կայուն զարգացման հաշվետվությունների կազման ստանդարտների առանցքային բացահայտան ոլորտները<sup>1</sup>

Հատկանշական է, որ կայուն զարգացման հաշվետվությունների կազմման միջազգային ստանդարտներում կառավարման գործիքակազմի բացահայտումների պահանջ է դրվում: Տեղեկատվություն օգտագործող շահառուներին պետք է հասկանալի դառնա, թե որքանով է կազմակերպությանը հաջողվում կառավարելի դարձնել կայուն զարգացման գործընթացը, ինչ եղանակներով է իրականացվում այդ գործընթացի

<sup>1</sup> **Sahakyan N.**, Financial information issues of business impacts on climate change, //Economics, Finance and Accounting scientific journal, 2(12) 2023. pp: 104-108.

մշտադիտարկումը, կառավարչական վերահսկողության և հաշվետվական ինչպիսի միջոցներ են կիրառվում:

Կայուն զարգացման հաշվետվությունների միջազգային ստանդարտները կարևորում են նաև կազմակերպության կողմից կայունության ռազմավարության բացահայտումները: Հատկապես ընդգծվում են այն ռիսկերն ու հնարավորությունները, որոնք ձևավորվում են կայուն զարգացման ռազմավարության իրագործման ճանապարհին:

Ի տարբերություն ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների, որոնք ավանդաբար ներկայացնում են կազմակերպությունների ներքին իրավիճակը բնութագրող տեղեկատվություն, կայուն զարգացման ստանդարտները պահանջ են դնում բացահայտելու նաև կազմակերպությունից դուրս՝ գործարարության արժեքային շղթայի մյուս հատվածներում ձևավորվող կայուն զարգացման այն հետևանքները, որոնք առաջանում են հաշվետու կազմակերպության տնտեսավարման վաքագծային փոփոխությունների արդյունքում: Դրանով իսկ շահառուները տեղեկացվում են, թե որքանով է հաշվետու կազմակերպությունը իր գործունեության ներագրում գործարարության արժեքային շղթայում ընդգրկված գործընկերային այլ կազմակերպությունների կայուն զարգացման բարելավումների վրա:

«Կայունությանը առնչվող ֆինանսական տեղեկատվության բացահայտման ընդհանուր պահանջներ» ՖՀՄ-S1 ստանդարտի նպատակն է կազմակերպությունների հրատարակվող հաշվետվություններում ներկայացնել կայունության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների մասին տեղեկատվություն, որն օգտակար է ֆինանսական հաշվետվությունների հիմնական օգտագործողներին՝ կազմակերպությանը ռեսուրսներ տրամադրելու որոշումներ կայացնելիս (ՖՀՄ-S1, կետ 1):<sup>1</sup> Փաստորեն, ստանդարտը առավելապես հասցեագրվում է պոտենցիալ ներդրողներին, որպեսզի նրանք հրապարակված հաշվետվություններում տեղ գտած բացահայտումներով որոշումներ կայացնեն կայուն զարգացման ուղին բռնած կազմակերպության ֆինանսական ռեսուրսներ տրամադրե-

---

<sup>1</sup> IHR-S1, International Financial Reporting Standart

լիս: Սակայն, ստանդարտի կիրառմամբ արժեքավոր տեղեկատվություն է ներկայացվում կազմակերպության կայուն զարգացմանը առնչվող նաև մյուս շահառուներին (տե՛ս գծապատկեր 4), որոնք գնահատում են ինչպես գործընկերային ռիսկերը, այնպես գործարարության համբավը:


ՖՀՄ-S1 ստանդարտը պահանջում է, որ կազմակերպությունը բացահայտի տեղեկատվություն կայունության հետ կապված ռիսկեր և հնարավորություններ, որոնք կարող են ազդել կազմակերպության դրամական հոսքերի, ֆինանսավորման հասանելիության կամ կապիտալի արժեքի վրա կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ կտրվածքով (ՖՀՄ-S1, կետ 3): Կազմակերպության կայունության հետ կապված ֆինանսական բացահայտումները պետք է իրականացվեն նույն ժամանակահատվածում, ինչ ժամանակահատվածում ներկայացվում են ֆինանսական հրապարակվող հաշվետվությունները: Հատկանշական է նաև, որ ստանդարտը պահանջում է նաև տեղեկատվական փոխկապակցությունների բացահայտումներ, ինչպիսիք են

- կայուն զարգացման ռիսկերի ներազդեցության հետևանքների փոխգնահատումները կազմակերպության գործունեության հեռանկարների վրա,

- կայուն զարգացման ֆինանսական բացահայտումների շրջանակում կառավարման, ռազմավարության, չափումների և ռիսկերի կանխարգելման թիրախավորման փոխկապակցվածությունները (ՖՀՄ-S1, կետ 21):

Ընդհանուր առմամբ, ՖՀՄ-S1 ստանդարտի կողմից ներկայացվող բացահայտումների պահանջները հանդես են գալիս չորս խմբով (տե՛ս գծապատկեր 5): Բացահայտումները առաջին հերթին թիրախավորվում են **կառավարմանը**, նպատակ ունենալով ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին հնարավորություն տալ հասկանալու կառավարման գործընթացները, վերահսկումները և ընթացակարգերը, որոնք կազմակերպությունը օգտագործում է մշտադիտարկման համար:





**Գծապատկեր 5.** Էկոհամակարգային ծառայությունների ֆինանսական կառավարման տեղեկատվական ապահովման ուղղությունները

Որպես կառավարման մարմիններ կարող են հանդես գալ մասնագիտացված խորհուրդը, կոմիտեն կամ կառավարման համար պատասխանատու համարժեք մարմինը, պատասխանատու անհատները, որոնք առնչվում են կայունության հետ կապված ռիսկերին և հնարավորությունների վերահսկման համար: Այս առումով, պետք է տալ բացահայտումներ, թե.

- ✓ ինչպիսի՞ն է պատասխանատվության շրջանակը կայունության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների կառավարման լիազորությունների մանդատներում,

- ✓ կառավարիչների դերերի նկարագրությունները, և թե ինչպե՞ս է մարմին(ներ)ը կամ անհատ(ներ)ը որոշում, առկա են արդյո՞ք, կամ կլինեն համապատասխան հմտություններ և կարողություններ.

- ✓ մշակվել է՞ն վերահսկելու ռազմավարություններ, որոնք նախատեսված են արձագանքելու համար կայունության հետ կապված ռիսկեր և հնարավորություններ,

✓ ինչպե՞ս և որքան հաճախ է տեղեկացվում մարմին(ներ)ը կամ անհատ(ներ)ը, կայունության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների մասին.

✓ արդյո՞ք մարմին(ներ)ը կամ անհատ(ներ)ը քննարկել են փոխզույմները՝ կապված այդ ռիսկերի և հնարավորությունների հետ,

✓ ներառված է արդյո՞ք ռիսկերի կառավարման արդյունքները վարձատրության քաղաքականության մեջ,

✓ վերահսկում են արդյո՞ք ընթացակարգեր, որոնք օգտագործվում են կայունության հետ կապված մոնիտորինգի, կառավարման և վերահսկելու համար

✓ արդյո՞ք ղեկավարությունն աջակցում կայունության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների վերահսկման ընթացակարգերի բարելավմանը:

**Ռազմավարության** վերաբերյալ կայունության ֆինանսական բացահայտումների նպատակն է ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հնարավորություն տալ ընկալելու կազմակերպությանը կայունության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների ռազմավարական կառավարման շրջանակը (ՖՀՄՍ-S1, կետ 28):

Ռազմավարությունը բացահայտելիս գնահատվում են կայունության հետ կապված այդ ռիսկերի և հնարավորությունների ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով (տե՛ս գծապատկեր 5):

Կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր նշանակության օգտագործողներին հասկանալու կայունության հետ կապված ռիսկերը և հնարավորություններ, որոնք ողջամտորեն կարելի է ակնկալել, որ կազդեն կազմակերպության հեռանկարների վրա:

Մասնավորապես, կազմակերպությունը պետք է.

ա) նկարագրի կայունության հետ կապված ռիսկերն ու հնարավորությունները, որոնք կարող են ողջամտորեն ներագրել հեռանկարային գործունեության վրա,

բ) հստակ արձանագրի ժամանակային հորիզոնները՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, որոնց ընթացքում կայունության հետ կապված այդ ռիսկերից յուրաքանչյուրի ազդեցությունը հնարավոր լինի ողջամտորեն ակնկալել,

գ) բացատրել, թե ինչպե՞ս է կազմակերպությունը սահմանում «կարճաժամկետ», «միջնաժամկետ» և «երկարաժամկետ» սահմանները և ինչպե՞ս են դրանք փոխկապակցվում պլանավորման հորիզոնների հետ՝ կազմակերպության կողմից ռազմավարական որոշումների կայացնելիս (ՖՀՄՄ-Տ1, կետ 28):

Կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ընդհանուր նշանակության օգտագործողներին հասկանալու կայունության հետ կապված ռիսկերի ազդեցությունը ռազմավարական որոշումների կայացման վրա: Մասնավորապես, կազմակերպությունը պետք է տեղեկատվություն հրապարակի, թե.

ա) ինչպե՞ս է արձագանքել և ինչպե՞ս է նախատեսում արձագանքել կայունության հետ կապված ռիսկերին ու հնարավորություններին իր ռազմավարական որոշումների կայացման գործընթացում,

բ) քանակական և որակական տեղեկատվությամբ ինչպե՞ս է գնահատում առաջընթացը պլանների նկատմամբ, որ կազմակերպությունը բացահայտել է նախկինում,

գ) ինչպե՞ս է իրականացվում փոխզիջում կայունության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների միջև, երբ կազմակերպությունը կարող էր հաշվի առնել այդ գործողությունների և զբաղվածության շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու հնարավորություններ, որոնք նրանք կատեղծեին համայնքում:

**Չափումների** վերաբերյալ կայունության հետ կապված ֆինանսական բացահայտումների նպատակն է ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հնարավորություն տալ գնահատելու կազմակերպության թիրախավորված կատարողակա-

նը՝ կապված կայունության ռիսկերի մեղմման և հնարավորությունների իրագործման հետ (տե՛ս գծապատկեր 5):

Կազմակերպությունը պետք է բացահայտի կայունության հետ կապված յուրաքանչյուր ռիսկի և հնարավորության համար.

ա) չափանիշներ, որոնք պահանջվում են ՖՀՄՍ կայունության բացահայտմամբ,

բ) չափումներ, որոնք կազմակերպությունն օգտագործում է չափելու և վերահսկելու կայունության հետ կապված այդ ռիսկը կամ հնարավորությունը,

գ) կատարողականը՝ կապված կայունության ռիսկի հետ կամ հնարավորություն, ներառյալ առաջընթացը դեպի ցանկացած թիրախ (ՖՀՄՍ-S1, կետ 28):

Յուրաքանչյուր թիրախի համար կազմակերպությունը պետք է բացահայտի.

ա) չափիչ, որն օգտագործվում է թիրախը սահմանելիս և դեպի առաջընթացը վերահսկելու համար նպատակին հասնելիս,

բ) կոնկրետ քանակական կամ որակական թիրախ, որը սահմանել է կազմակերպության կողմից,

գ) այն ժամանակահատվածը, որի ընթացքում կիրառվում է նպատակը,

դ) բազային ժամանակահատվածը, որից ելնելով առաջընթացը չափվում,

ե) ցանկացած նշաձողեր և միջանկյալ թիրախներ.

զ) յուրաքանչյուր թիրախի նկատմամբ կատարողականություն և միտումների կամ փոփոխությունների վերլուծություն,

է) թիրախի ցանկացած վերանայում և այդ վերանայումների բացատրությունը:

Հարկ է նաև նշել, որ չափումների սահմանումը և հաշվարկը, ինչպես նաև կազմակերպության թիրախները և դրանց հասնելու ուղղությամբ առաջընթացի մոնիտորինգը պետք է լինի ժամանակի ընթացքում հետևողական (ՖՀՄՍ-S1, կետ 51):

Կազմակերպությունը պետք է բացահայտի տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ընդհանուր նշանակության օգտագործողներին ռիսկայնության շրջանակում **ֆինանսական հաշվետվությունները** գնահատելու համար (տե՛ս գծապատկեր 5): Մասնավորապես, անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու.

ա) կայունության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում (ընթացիկ ֆինանսական ազդեցություններ); և

բ) կայունության հետ կապված ռիսկերի և հնարավորությունների ակնկալվող ազդեցությունները կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

Մասնավորապես, կազմակերպությունը պետք է բացահայտի քանակական և որակական տեղեկատվություն այն մասին, թե

- ինչպե՞ս են կայունության հետ կապված ռիսկերն ու հնարավորություններն ազդել ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա հաշվետու ժամանակաշրջանում,

- ինչպե՞ս է կազմակերպությունն ակնկալում իր ֆինանսական դիրքի փոփոխություն կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում՝ հաշվի առնելով կայունության հետ կապված իր ռազմավարությունը, ռիսկերի կառավարման հնարավորությունները,

- ինչպե՞ս է կազմակերպությունն ակնկալում իր ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը փոխել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում՝ հաշվի առնելով կայուն զարգացման ռազմավարությունը:

Եթե կազմակերպությունը որոշում է, որ կարիք չունի իրականացնելու կայուն զարգացման լրացուցիչ բացահայտումներ և քանակական տեղեկատվություն տրամադրելու կայունության հետ կապված ընթացիկ կամ ակնկալվող ֆինանսական ազդեցությունների մասին, ապա պետք է.

ա) բացատրի, թե ինչու՞ չի տրամադրել քանակական տեղեկատվություն.

բ) տրամադրի որակական տեղեկատվություն այդ ֆինանսական ազդեցությունների մասին,

գ) տրամադրի քանակական տեղեկատվություն համակցված ֆինանսական ազդեցությունների մասին և ներկայացնի կայունության հետ կապված ռիսկերի կամ հնարավորության մասին այլ անձանց հետ, եթե կազմակերպությունը որոշի, որ այդ քանակական տեղեկատվությունը և համակցված ֆինանսական ազդեցությունները օգտակար չեն լինելու իր համար (ՖՀՄՄ-S1, կետ 40):

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Էկոհամակարգային ծառայություններ ստանալիս կազմակերպությունները պետք է լուծեն ֆինանսական կառավարման տեղեկատվական ապահովման խնդիրներ, որպեսզի արտաքին և ներքին շահառուների համար հասկանալի դառնա գործարարության կողմից շրջակա միջավայրի ռեսուրսների սպառման պատասխանատվության աստիճանը: Այդ նպատակով, կազմակերպությունների կողմից հրատարակվող տարեկան ֆինանսական հաշվետվություններում անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացվելու, թե որքանով է բիզնես գործունեությունը փոխհատուցել ստացված էկոհամակարգային ծառայությունների դիմաց, և ինչ ուղիներ են ընտրվել նման փոխհատուցումների գծով: Էկոհամակարգային ծառայությունների սպառման ֆինանսական կառավարումը բացահայտումներ է պահանջվում նաև գործարարության կայուն զարգացման ռիսկերի և դրանց կանխարգելման հնարավորությունների գծով: Հետևաբար, կազմակերպությունները տեղեկատվական ընդգրկուն բացահայտումներ են ներկայացնելու էկոհամակարգային ծառայությունների շուրջ ձևավորվող շահառուներին, որպեսզի վերջիններիս կողմից իրականացվեն արդյունավետ գործընկերային կառավարչական որոշումներ:

**Армен Джугурян, Нонна Хачатрян, Вопросы информационного обеспечения финансового управления экосистемными услугами** – В статье предлагается при получении экосистемных услуг в организациях решать информационные вопросы финансового управления, чтобы внешние и

внутренние заинтересованные стороны понимали степень ответственности за потребление ресурсов окружающей среды бизнесом. Для этого в годовой финансовой отчетности, публикуемой организациями, будет представлена необходимая информация о том, насколько предпринимательская деятельность компенсировала полученные экосистемные услуги, и какие пути были выбраны в отношении таких компенсаций. Финансовое управление потреблением экосистемных услуг также требует раскрытия информации о рисках устойчивого развития бизнеса и возможностях их предотвращения. Таким образом, организации будут предоставлять исчерпывающую информацию заинтересованным сторонам в сфере экосистемных услуг, чтобы они могли принимать эффективные решения по управлению партнерством.

**Armen Tshuguryan, Nonna Khachatryan, Issues of information provision for financial management of ecosystem services** - The article proposes in process of obtaining ecosystem services in organizations, to solve information issues of financial management so that external and internal stakeholders understand the degree of responsibility for the consumption of environmental resources by business. To achieve this, the annual financial statements published by the organizations will provide the necessary information on the extent to which business activities compensated for the ecosystem services received, and what paths were taken in relation to such compensations. Financial management of the consumption of ecosystem services also requires disclosure of information about the risks of sustainable business development and opportunities to prevent them. In this way, organizations will provide comprehensive information to ecosystem service stakeholders so they can make effective decisions to manage the partnership.

Ուղարկվել է խմբագրություն 09.09.2023թ.

Գրախոսվել է 12.09.2023թ.

Ստորագրվել է տպագրության 17.09.2023թ.